

# ՔԱՐՈՉ ԽՈՍՎԿԱՆ

Տ. ՏԱԹԵՎ ԱՐՔԵՊԻՄԿՈՂՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ  
ԽՈԽՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ  
(16 փետրվարի 2003 թ.)

«Երանին արանց, որ սրբով սուրբ հն՝  
ողովինական արանք Աստծուն պիտի տեսնեն»:  
(Մագր. Ե 8)

Սիրելի հոգևոր եղբայրներ, քույրներ, հարազարդներ և ճեմարանական սաներ.

Վեհական Հայրապետի գնորհնությամբ կշարունակվին ուխտավորական հանդիսավոր Պատարագները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ՝ նվիրված Մայր Տաճարի օծման 1700-ամյակին: Այս գոնակագրաբություններով մենք փորձում ենք ավելի լավ հասկանալ այս սրբագեղի խորհուրդը, ընկալել նրա արժեքը, անդադարնալ նրա բացառիկ կարևորությանը և, ուխտավորաբար աղոթենով, անհրաժեշտ հոգևոր և բարոյական սմունդը սրանալ, որպեսզի կարողանանք մեր եկեղեցիները շնն պահել և մարդու փրկության Եկեղեցու առաջնորդությունը շարունակել:

Դրապարակային իր եկույթներից մեկում Վեհական ասաց, թե միշտ է, որ զանազան ուրիշ պաշտոններ ունեմ, հոգևոր իշխանության պերն եմ, ամեն գետակի վարչական այլ պարտավորություններով միշտ զրադ և ծանր աշխարհանքի մեջ եմ, բայց իմ կարևորագույն պաշտոնը ես կնկատեմ այս ժողովրդին հովիկ լինելը, ժողովրդին դեր կանգնելը, նրան առաջնորդելը և նրա հոգևոր, ազգային ու բարոյական կյանքը ճիշդ հոնին մեջ պահելը:

Տեսնում եք, որ այս կիրակի չկան երավիրյալներ, չկան պաշտոնական հյուրեր կամ թեմարեն եկած պարզամանվորներ: Թեմակալ առաջնորդ մը չի պակարագեք: Վեհականը գնորինել է, որ մեզ պես պարզ հավաքացյալներ, ովքեր այս եկեղեցու, այս սրբավայրի ամենօրյա հավաքարիմ ժողովուրդն են, ամեն օր այսդեղ եկող, աղոթող և այս սրբավայրի մեջ շնչող ու ապրող ամձինք են, կարողանան իրենց ուխտը կարարել:

Շնորհակալ եմ Վեհական Հայրապետին, որ ձեր բոլորի անունով այս Ս. Պատարագը մարդուցանելու պարբականությունն ինձ վրա է դրել: Դրա համար մեր հոգևոր կյանքի զարգացման մեջ կարևոր այս շարթվան ընթացքին ձեզ երավիրում եմ խորհրդածել այս սրբավայրի՝ մեր Եկեղեցու և ժողովրդի կյանքի մեջ կարարած և կադարձելիք երաշագործ դերի մասին:

Դուք գիտեք, որ այս շարթվան ամբողջ օրերը պահոց օրեր էին: Դրանք հիշարակն են ոչ թե Ս. Սարգսին գոնին, այլ կոչվում են Առաջավորաց պահը: Դրանք սահմանվել են մեր հավաքող Նոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից, և հիշեցնում են այն շարաթները, այն պարմական օրերը, երբ Ս. Գրիգոր Լուսավորչ դակավիլին ենթանու ժողովրդին ուսուցանում էր քրիստոնեական հավաքի հիմնական դավանությունը համազգային մեր մկրտությունից առաջ:

Այս շաբաթը մեզ այդ պահը կիշեցնե և կիուշի, թե ինչն էր, որ մեզ կապեց քրիստոնեության, կամ ինչո՞ւ մենք կապվեցինք քրիստոնեական հավաքին և արժեքներուն: Ինչո՞ւ մենք ուխտեցինք մինչն վերջ մնալ, ապրել և գործել իբրև Ասպծո ժողովուրդ:

Դիմացարքի օրը մենք փոնեցինք նաև Տյառնելուառաջի նախապոնակը, որուն ընթացին մեր երեխանները, բայց մանավանդ նորապսակները և մեր երիտրասարդությունն ամբողջ հանձնեցինք Ասպծո հոգավարությանը և պաշտպանությանը: Որովհենք և այլ ժողովուրդը մինչն իման է հավաքում է, որ սուրբ է ամուսնությունը, սուրբ է հայ ընդամիքը: Նրա ծոցին մեջ միայն կծնվին մեր եկեղեցները, այն առաջնորդները, որոնք մեր ժողովուրդը կպահեն կանգուն, հզոր և ամեն դժևակ չարիքների դեմ հայթական:

Իսկ երեկ՝ շաբաթ օրը, փոնեցինք Ս. Սարգսի փոնը, որ իր որովոյն և իր գինվորներին հետք նախադակվեց Ընդհանրական Եկեղեցու հավաքի պաշտպանության համար: Այն օրը մեր միքով պետք է անցներ, որ մենք աղոթենք մեր հայոց բանակի, մեր քաջ երիտրասարդների համար, որպեսզի նրանք իրենց քաջությունն ու խրոխրությունն ուրիշ անհմասք արարուների մեջ չվագնեն, միշտ մնան այս հայրենիքին և մեր հավաքին պաշտպան: Որովհենք երիտրասարդի հոգին մեջ կծնի հավաքքը, փեսիքը կպայծառանա, և կզրանա նվիրումը հայրենիքի, Ասպծո և ժողովորդին:

Եթե այդ աղոթքը չենք արել, ունիտավոր քույրեր և եղբայրներ, այսօք անենք: Պարզ է, որ երիտրասարդությունը մեր վաղվան ապագան է: Նրանք ինչ ընդունեն, ինչ որոշեն, այդպես պիտի լինի մեր ժողովորդի ճակարտագիրը: Ինչ առաջնորդություն ընծայեցինք նրանց, ինչ կրթություն տվինք, ինչպես դաստիարակեցինք զանոնք, վաղն այսպես պետք է ըլլան:

Այսքան խոսեցինք սուրբերի և սրբության մասին: Ես ուզում եմ, որ Խջման այս Ս. Սեղանի առջև մենք մրածենք, թե ինչ է սրբությունը: Ում համար է սրբությունը և ինչպես կներգործի սրբությունը: Նրա ճիշդ հասկացողությունը կարևոր և կենսական է մեր բոլորի համար:

Մարդիկ երբեմն մրածում են, թե սուրբ լինել՝ կնշանակն կապարյալ լինել, մաքուր լինել: Մեր ասածին, մեր արածին, մեր պահկածին մեջ պետք չէ թերություն լինի: Սրբությունը միայն վերագրում ենք այն անձին, որ իր մեջ կապարելազործան է հասցրել ամեն ինչ:

Իրո՞ք, այսպես պետք է հասկնակ սրբությունը: Բայց կապարյալ ինչ կա այս աշխարհում: Կապարյալ մարդ կարելի՞ է զգնել: Ուրեմն չկա՞, անկարելի՞ է սրբությունը:

Դարձյալ սրբությունը մենք երբեմն շիփուում ենք աշխարհից երաժարումի հետք, որը հանգեցնում է միայն ու միայն ճգնության կյանքի փնտրությին: Աշխարհի արժեքներով, չափանիշներով չքարվելը, նրանցից զրկվելը, կարծում ենք, որ մեզ կառաջնորդի սրբություն: Ճգնավորները մեկ-մեկ այդ դաստիարակությունը, այդ հասկացողությունը նաև թողնում են մեր վրա: Բայց չէ՞ որ աշխարհն է Ասպծո աշխարհն է: Պիտի անփեսվի՞ այն, բայց չէ՞ որ մենք Ասպիկած մը, Դայր մը ունենք, որ առավորից մինչն երեկո այս աշխարհի հոգավարությանն է լծված և նախախնամական իր արարությունը պահպանում է իր արարչազործությունը, Ասպիկած սիալվում է: Տեսեք, թե սրբության ճիշդ հասկացողությունը որքան կենսական է մեզմն յորաքանչյուրիս համար:

Իսկ իման եկեք հարց գանք: Ինչո՞ւ և ինչո՞ւ է սուրբ Խջմածինը, որովհենք քարե՞րն են որոշ ձևով դասավորվել, կամ պարզապես որովհենք մենք սուրբ ենք ասում՝ դրա համար է այս գենը սրբավայր:

Դին Կորակարանի մեջ հիմնալիրքն բացաբրված է սրբությունը: Խորակեացիք՝ Դին Ուխտի ժողովուրդը, ամեն անգամ, որ ազգի ճակագրի համար կարևոր մի որոշում պիտի կայացնենին, Ուխտի Տապանակը բերում-դնում էին այդ ժողովի համար հավաքված ժողովոյի կենտրոնում:

Գիտեք, որ Ուխտի Տապանակի մեջ պահված էր մանանան, որ Ասրված ուղարկել էր իրենց, երբ իրենք անոթի ղեկերում էին անապակում: Այնուեղ դրված էր գավազանը Մովսեսի, որ առաջնորդում էր այդ ժողովուրդին համուն Ասրծու: Այնուեղ էր Տանարանյա պարվիրանը, Ասրծու մասինանշած կյանքի ուղին: Բայց ոչ մանանան, ոչ փայտը և ոչ էլ դասնաբանյայի քարերն էին սրբությունը: Մարգարեները պարմում են, որ երբ և որդեռ Ուխտի Տապանակը պահվում էր, այնուղ մշուշը ծածկում էր ամբողջ վրանը, ժողովուրդը կամ դաճարը և պարում նրանց ասրվածավախության, Ասրծու սիրույն և Ասրծու ներկայության գրավակը զգացմունքով: Սրբությունը միայն ու միայն Ասրծուն է պարկանում, և այնուեղ, որ Ասրված հայդնվում է, այնուեղ, որ Ասրված կա, այնուեղ Սրբությունն է քավագրում:

Մայր Աշոռը՝ անկրկելի մեկ հարիկ Սրբություն Սրբոց է: Ինչո՞ւ: Որպիսի այսրեղ Ասրված Ինքն է իշեն, Ինքն է հայդնվել: Այսուեղ ենք մենք Ասրծուն հանդիպել: Ասրված այս փեղն ընդրել է հայ ժողովուրդի հետը Իր ուխտի համար: Ուրիշ ենեղեցի կարող ենք կառուցել, որ ևս Ասրված կա, ձեր հավաքքով կհայդնվի: Բայց Մայր Աշոռը, Ս. Էջմիածինը միակ այն փեղն է, որ Ասրված Ինքն է ընդրել Ինքինքնը մեզ հայդնելու, մեր կյանքը և մեզ սրբացնելու համար:

Անցյալում պարահած է, որ հայոց կաթողիկոսները սրբաված, հարկադրված թողել են Ս. Էջմիածինը, գնացել ուրիշ փեղ: Բայց Էջմիածինը մնացել է հայության սրբավայրը, ամբողջ հայության անկրկնելի և միակ այն ուխտավայրը, որ ամեն հայ պիտի զա ինքինքը հայ քրիստոնյա զգալու և Ասրծու հետը իր հանդիպման և Նրա հետը ապրելու իր ուխտը նորոգելու:

Մենք այսօր մեր աղոթքով այս ուխտը վերանորոգելու ենք կոչված և այդ պարբառով խորիրածության համար բնարան ընդրեցինք Դիտուի խոսքերը. «Երանի՛ նրանց, որ սրբով սուրբ են, որովինքուն նրանք Ասրծուն պիտի փեսնեն»: Նույնիսկ եթե մենք թաքնված ենք մութ փեղեր, ջնուանանք, որ Ասրված մեզ փեսնում է: Մենք ոչինչ առանց Ասրծու ներկայության կամ ուշադրության չենք կարող անել: Նրա ազը մեզ ենք է: Եթե մենք այդ զգացմուր չունենանք, զԱսրված ինչպես պիտի փեսնենք, Ասրված ինչպես պիտի համզի մեջ, Ասրված ինչպես պիտի կարողանա մեզ օգնել, Ասրված ինչպես պիտի կարողանա մեզ ի գոգն Արքահամու փանել:

Սրբության և սրբությունների հանդեպ հարգանքը մաքրության և ասրվածավախության այլ զգացմունքի չպեսք է վերածեք: Ասրծու հետ լինելու, Ասրծու ցուցմունքով առաջնորդվելու և Ասրծու ուժին ապավինելու հավաքով է, որ սրբությունը դարձյալ մշուշի պես մեր վրա պիտի հանգչի: Իրոք, Ասրված պեսք չունի սրբության: Ասրված ամեն ինչ ունի: Սրբությունը մեզ համար է, մարդու համար է:

Երկու փորձություն կարգելի մեզ սրբության հասնելու այսօր: Մին՝ ինչպես Եսայի մարգարեն է ասում, Բարելոնի մեջ գերի ինկած ժողովուրդին. «Դուք միածում եք, ժողովուրդ, թե ինչու եք գերի դառն Բարելոնի մեջ: Ձեր երկիրը կորցրել եք, որովինքուն դուք ձեր Ասրծուն

մոռացել եք, դուք ձեր ուժի աղբյուրից կփրվել եք, դուք ձեզ ձեր գորության արմադրից պոկել եք:

Դրա համար դիսեք, օդարի ձեռք եք ընկել: Ասդված ուրացող ժողովրդին չի կարող փրկիչ մը դրկել: Դուք հարցնում եք, ո՞ր են Մովսեսները, ինչո՞ւ Ասդված մեզ առաջնորդ չի ուղարկում, որ մեզ փրկի: Մեր Ասդու հավաքից զրկվելով, նրա ճանապարհները մոռանալով Ասդված ինչպես կարող էր մեզ փրկել»: Ասդուն մոդ մնալոր փրկության ամենամեծ գրավականն է, նրա պարվիրանների լույսով առաջնորդվելը, մաքրության, ինքնարյուրնացման ամենամեծ աղբյուրն է: Վերջին 80 տարիներին մենք մեծ փորձության մեջ ընկանք: Իսկ հիմա ասում ենք՝ ո՞ր է Ասդված, ինչո՞ւ չի ուղարկում իր առաջնորդներին, փրկիչներին: Բայց վերագրթոնքի այս դարիներին դուք դիսենում եք, թե ինչպես ամենն նեղ օրերին ձեր հավաքքի կանչով գախս է նոր սերունդը՝ այս Եկեղեցու առաքելությունը հասդրավակամ քայլերով շարունակելու: Այդ հավաքքով պետք է ապրեք և գործեք:

Երկրորդ՝ փորձությունը մեզ գախս է մարդկային մեղքերից: Դողոս առաջքան իր աշակերի հետ խոսելիս ասում է. «Նայեցնք ձեր շուրջը, իմացնք, որ վերջին օրերին չար ժամանակներ պիտի լինեն, երբ մարդիկ պիտի դառնան անձնասեր, փողասեր, հպարփ, ամբարդավան, հայեոյիշ, ծնողներին անհինազանդ, անշնորհնենկալ, անմաքոր, անհաշփ, անզութ, մաքնիշ, հանդուզն, մեծամիտ, ավելի հեշտասեր, քան բարեսեր: Եվ ասդվածպաշտության կերպարանքին դակ՝ ամեն դիսակ մոլորություններով լի» (հմնդ. Ձ Տիմ. Գ 1):

Հաճախ նայում ենք աշխարհին, հուսահարդում և մնկ-մեկ ասում ենք, թե ինարավոր չէ այս աշխարհի մեջ քրիստոնյա մնալ: Ի վերջո որոշում ենք իրենց պես լինել, որ կարողանանք ապրել: Իսկ եթե մարդիկ շրջապարհին նայեն, դուք ձեր շուրջը նայեք՝ կիուսահարվեք: Դեմքը է նայել դեպի ներս, դեպի մեր խորագոյն եղություն ու հավաքը, որ Ասդված անպայման ներկա է այն սուրբ սրբութի մեջ, որ Ասդված միշտ նախընդորում է բնակություն հասդրավել, ամեն դիսակ մեղք, զորս առաջքալը թվարկում է, դրս կզա մեզանից, և բոլորս կմաքրվենք և կդանանք Ասդու համար պարվական ժողովուրդ:

Ուխտավորությունը այն պահն է, երբ մեր սիրով ու հոգին մեր ձեռքը բռնած Ասդուն ենք ներկայացնում և ասում. «Մաքրիր, Ձո՞ւ ուզած դունը սարքիր, Դու ևս ասել, որ մաքուր սրբերի մեջ պիտի բնակվենք»:

Այսօրվա այս Ս. Պատրագով, ահավասիկ, այդ աղոթքն ենք մենք մաքուցում մեր Ասդուն, մեզ նախախնամող Նորը, որպեսզի մեզ սրբի, մաքրի և Իր հարազար որդիների պարկերով զարդարի: Խնդրում ենք Նրանից, որ մեզ միշտ Իր գեսությանն արժանացնի շնորհի այս սրբավայրի, որ Ս. Էջմիածինն է:

Աղոթենք Ամենայն Հայոց Հայրապետի առողջության և երջանիկ գահակալության համար և մաղթենք, որ Ասդված Մայր Վթոռի միաբանությանը, եականուսաց դասին, վարդապետներին, սարկավագներին Իր շնորհներով առաջնորդի դեպի բարի ծառայություն:

«Շնորհք Տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամեննեանդ ամէն»: